Ազդեցության քանակական գնահատում չի իրականացվել, քանի որ դա նախատեսված չէր աշխատանքների շրջանակով: Մասնավորապես, մեր վերլուծությունը իրականացվել է տեղեկատվության վերոնշյալ աղբյուրների հիման վրա՝ առանց ամբողջական ազդեցության հատուկ գնահատման: Աշխատանքների շրջանակում ներառված ազդեցության ոլորտները և սոցիալական ծրագրերը համաձայնեցվել են Կոկա-Կոլա ՅՔԵԱ-ի հետ:

Թափոնների կառավարում, փաթեթավորում և վերամշակում

Կոկա-Կոլա ՅՔԵԱ-ն նպատակ ունի նվազեցնել փաթեթավորման պոտենցիալ ազդեցությունը շրջակա միջավայրի վրա արտադրության յուրաքանչյուր փուլում՝ կիրառելով հետևյալ 3 սկզբունքները⁽⁷⁾.



Նվազեցնել Վերականգնել Վերօգտագործել

Թափոնների կառավարումն ԸՆկերության բնապահպանական գործունեության նպատակներից մեկն է⁽⁷⁾:



96.8% **98.6%**

Գործարանում առաջացած կոշտ թափոնների վերամշակված մասնաբաժինը

2016

Գործարանում առաջացած կոշտ թափոնների վերամշակված մասնաբաժինը

2017

Շրջակա միջավայրի համար վտանգավոր բոլոր թափոնները, ներառյալ՝ բենզինը, դիզելային վառելիքը և տարբեր քիմիական նյութերը, առանձնացվում են ԸՆկերության տարածքներում և հանձնվում են Կոկա-Կոլա ՅՔԵԱ-ի կողմից հաստատված վերամշակող ընկերություններին՝ նվազագույնի հասցնելով շրջակա միջավայրի վրա ազդեցությունը:

Near Loss ծրագրի շրջանակներում արձանագրված դեպքերը⁽⁷⁾




Մասնավորապես, աշխատողները խրախուսվում են տեղեկացնել ջրի, էներգիայի կամ թափոնների կորստի/ոչ պատշաճ օգտագործման մասին Near Loss ծրագրի շրջանակներում: Թեև Կոկա-Կոլա ՅՔԵԱ-ի աշխատանքային միջավայրում էական փոփոխություններ տեղի չեն ունեցել, 2016թ-ին և 2017թ-ին ԸՆկերությանը տեղեկացվող դեպքերի քանակն աճել է ի համեմատություն 2015թ-ի: Սա կարող է դիտարկվել որպես շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ աշխատողների իրազեկվածության բարձրացման ցուցանիշ:

Յուրաքանչյուր տարի Կոկա-Կոլա ՅՔԵԱ-ն կազմակերպում է պլաստիկ թափոններից գետերի գետավազանի մաքրման աշխատանքներ: Օրինակ՝ 2016թ-ին Դալար գետի գետավազանից հավաքվել է 220 պարկ չքայքայվող թափոն:

Խմիչքները սառեցնող սարքավորումներ

Կորպորատիվ պահանջները բավարարելու նպատակով՝ Կոկա-Կոլա ՅԲԲԱ-ն սկսել է օգտագործել շրջակա միջավայրին չվնասող խմիչքները սառեցնող սարքավորումներ (ԽՍՍ) 2011թ-ից⁽⁷⁾: Այդ ժամանակից ի վեր ԸՆկերությունը չի գնում հիդրոքլորֆտորածխածնով սառեցնող սարքավորումներ և օգտագործում է հիդրոածխածնով և ածխածնի երկօքսիդով սառեցնող սարքավորումներ, որոնք չեն քայքայում օզոնային շերտը:




100%

ԸՆկերության նպատակն է 2030թ-ին 100%-ով անցում կատարել շրջակա միջավայրին չվնասող սառեցնող սարքավորումների⁽⁸⁾:

Սառեցնող սարքավորումներում Կոկա-Կոլա ՅԲԲԱ-ն օգտագործում է նաև Էներգախնայող սարքեր, մասնավորապես ԷԿՍ (Էլեկտրաէներգիայի կառավարման սարք) և ԼԴ (լուսարձակող դիոդային) լամպեր:

Շրջակա միջավայրին չվնասող խմիչքները սառեցնող սարքավորումների մասնաբաժինը և ԷԿՍ և ԼԴ պարունակող սարքավորումների մասնաբաժինը, 2015-2017թթ.




Աղբյուր. Կոկա-Կոլա ՅԲԲԱ-ի տվյալներ

Կոկա-Կոլա ՅԲԲԱ-ի ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա

Տնտեսական ազդեցությունը համախառն ավելացված արժեքի տեսանկյունից

Տնտեսական ազդեցությունը համախառն ավելացված արժեքի տեսանկյունից



Մեր գնահատմամբ 2015-2017թթ. ժամանակաշրջանում Կոկա-Կոլա ՀԲԶԱ-ն ստեղծել է **29.5 միլիարդ ՀՀ դրամ** ընդհանուր գումարով ՀԱԱ Հայաստանի տնտեսությունում՝ ներառյալ անուղղակի և ածանցյալ ազդեցությունները: Այն կազմել է նշված ժամանակաշրջանի ընթացքում Հայաստանում ստեղծված ընդհանուր ՀԱԱ-ի **0.21%-ը**⁽¹⁴⁾:


29.5 միլիարդ ՀՀ դրամի մեջ

Ընկերության սեփական գործունեության արդյունքում ստեղծված ուղղակի ՀԱԱ^(1, 20):


Հայաստանում գործող 1-ին կարգի (ուղղակի) մատակարարների գծով Ընկերության ծախսումների և մատակարարման առավել լայն շղթայում ձևավորած գործունեության արդյունքում Ընկերության կողմից ստեղծված անուղղակի ՀԱԱ^(2,20):

Ընկերության ուղղակի և անուղղակի աշխատողների կողմից Կոկա-Կոլա ՀԲԶԱ-ի գործունեության հետ կապված իրենց աշխատավարձը Հայաստանում ծախսելու արդյունքում Ընկերության կողմից ստեղծված ածանցյալ ՀԱԱ^(2, 20):

ՀԱԱ-ի գծով ազդեցության մանրամասն կառուցվածք տարեկան կտրվածքով 2015 -2017թթ. համար, հազ. ՀՀ դրամ



Աղբյուր. Կոկա-Կոլա ՀԲԶԱ-ի տվյալներ, ՀՀԿԿ, Զեյ-Փի-Էմ-Ջի-ի հաշվարկներ



2017թ-ին Կոկա-Կոլա ՀԲԶԱ-ի կողմից ստեղծված ուղղակի ՀԱԱ-ի յուրաքանչյուր **1 ՀՀ դրամի** դիմաց Հայաստանի տնտեսության մեջ ստեղծվել է լրացուցիչ **1.5 ՀՀ դրամ** անուղղակի և ածանցյալ ՀԱԱ^(2,20):


Կոկա-Կոլա ՀԲԶԱ-ի կողմից ստեղծված ընդհանուր ՀԱԱ-ի մասնաբաժինը Հայաստանի ՀԱԱ-ում 0.18%-ից աճել է մինչև 0.24% 2015-2017թթ. ընթացքում:

- Ուղղակի ՀԱԱ
- Անուղղակի ՀԱԱ
- Ածանցյալ ՀԱԱ

Ածխածնի երկօքսիդի արտանետումներ և կլիմայի փոփոխություն

Կոկա-Կոլա ՀԲԶԱ-ն որդեգրել է մոտեցում ուղղված կլիմայի պաշտպանության հարցերին: Վերջին 5 տարիների ընթացքում Կոկա-Կոլա ՀԲԶԱ-ն նախաձեռնել է միջոցառումներ ածխածնի երկօքսիդի (CO₂) ուղղակի արտանետումների ինտենսիվությունը նվազեցնելու ուղղությամբ⁽⁷⁾: Արդյունքում, 2015թ-ից 2017թ. ընկած ժամանակաշրջանում Ընկերությունը նվազեցրել է արտադրված մեկ լիտր ըմպելիքի հաշվով CO₂ արտանետումները 5.7%-ով⁽⁶⁾:

CO₂ արտանետումները արտադրված մեկ լիտր խմիչքի հաշվով, գրամ




Աղբյուր. Կոկա-Կոլա ՀԲԶԱ-ի տվյալներ

Հարկ է նշել, 2015-2017թթ. ընթացքում Կոկա-Կոլա ՀԲԶԱ-ի արտադրության ընդհանուր ծավալի **15.2%** աճի արդյունքում 2017թ-ին ընդհանուր CO₂ արտանետումներն ավելացել են **8.6%-ով** ի համեմատություն 2015թ-ի:

Խնայողությունների շնորհիվ 2017թ-ին CO₂ արտանետումները **0.5%-ով** ցածր էին բյուջեով նախատեսված ցուցանիշից⁽⁶⁾:


Ընկերության նպատակն է 2020թ-ին CO₂ արտանետումները հասցնել **45գր.** արտադրված մեկ լիտր խմիչքի հաշվով, ինչը **33.6%-ով** ցածր է 2017թ-ի ցուցանիշից⁽⁶⁾:

Ածխածնի երկօքսիդի արտանետումները նվազեցնելու նպատակով Կոկա-Կոլա ՀԲԶԱ-ն խրախուսում է իր վարորդներին հետևել Էկո-երթնեկության սկզբունքներին, որի նպատակով կազմակերպվում են հատուկ դասընթացներ⁽⁷⁾:




5.1%

2017թ. քված կիլոմետրերի աճ




8.7%

Վարորդներն օգտագործել են ավելի քիչ վառելիք ի համեմատություն 2015թ.




13.1%

Վարորդներն օգտագործել են ավելի քիչ վառելիք 100կմ հաշվով ի համեմատություն 2015թ.



↓9.9%

Կոկա-Կոլա ՀԲԶԱ-ի ավտոմեքենաների պարկի ընդհանուր ածխածնի երկօքսիդի արտանետումները նվազել են ի համեմատություն 2015թ.



↓14.9%

Կոկա-Կոլա ՀԲԶԱ-ի ավտոմեքենաների պարկի ընդհանուր ածխածնի երկօքսիդի արտանետումները 100 կմ հաշվով նվազել են ի համեմատություն 2015թ.

Էլեկտրաէներգիայի օգտագործման արդյունավետություն


Էներգիայի արդյունավետ օգտագործումը Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ի բնապահպանական գործունեության մեկ այլ առաջնահերթ խնդիր է: Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ն կատարելագործում է էլեկտրաէներգիայի օգտագործման արդյունավետությունը՝ անցում կատարելով առավել Էներգաարդյունավետ աղբյուրների և մշակելով շրջակա միջավայրի վրա նվազագույն ազդեցություն ունեցող ածխածնի հիմքով տեխնոլոգիաներ⁽⁷⁾:



Գործարանում կիրառվում է միջազգային Բնապահպանական կառավարման համակարգի ISO 14001 ստանդարտը: Գործարանում իրականացվում է նաև տարեկան աուդիտ՝ Կոկա-Կոլա ընկերության որակի համակարգի ստանդարտների հետ համապատասխանությունը ստուգելու համար:



Հին սարքավորումները փոխարինվում են նորերով՝ արտադրական գործընթացի ընթացքում էլեկտրաէներգիայի սպառման ծավալը նվազեցնելու նպատակով:



Արտադրանքն առաքվում է շուկա քիչ ծավալով ածխածնի երկօքսիդ արտանետող տրանսպորտային միջոցներով:



Ընկերությունը ձեռք է բերել խմիչքները սառեցնող սառնարանների նոր տեսակներ, ինչպես նաև էլեկտրաէներգիայի կառավարման սարքավորումներ, որոնք թույլ կտան ապահովել խմիչքները սառեցնող սարքավորումների արդյունավետությունը:

Ընկերության 2020թ. նպատակն է իր կողմից օգտագործվող էլեկտրաէներգիայի **40%-ը** ստանալ Էներգիայի վերականգնվող և մաքուր աղբյուրներից:

2016թ-ին էլեկտրաէներգիայի սպառման ծավալի մի փոքր աճը բացատրվում է շաքարի օշարակի ֆիլտրման նոր գերարդիական տեխնոլոգիական համակարգի ներդրմամբ: Համակարգը մաքրում է սպիտակ օշարակը՝ բարձրացնելով արտադրանքի որակը: Չուգահեռաբար Էներգախնայողությանն ուղղված միջոցառումների իրականացման շնորհիվ Ընկերությանը հաջողվել է 2017թ-ին նվազեցնել էլեկտրաէներգիայի սպառման ծավալները՝ հասցնելով 2015թ-ի մակարդակին:


2015-2017թթ. ընթացքում Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ի ըմպելիքի արտադրության ընդհանուր ծավալի **15.2%** աճի արդյունքում 2017թ-ին էլեկտրաէներգիայի սպառումն ավելացել է **15.2%-ով** ի համեմատություն 2015թ-ի:

Խնայողությունների շնորհիվ 2017թ-ի էլեկտրաէներգիայի սպառման մակարդակը **10%-ով** ցածր էր բյուջեով նախատեսված ցուցանիշից⁽⁸⁾:

Ընկերության նպատակն է 2020թ-ին ապահովել **0.54 ԱՁ** էլեկտրաէներգիայի սպառում արտադրված մեկ լիտր խմիչքի հաշվով, ինչը **14.3%-ով** ցածր է 2017թ-ի ցուցանիշից⁽⁹⁾:

Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ի կողմից որդեգրված էլեկտրաէներգիայի օգտագործման արդյունավետության բարձրացման ռազմավարությունը համապատասխանում է Երևան քաղաքի ջերմոցային գազի արտանետումների կրճատման վերաբերյալ ստանձնած պարտավորություններին: 2014թ. սեպտեմբերի 9-ին Երևանի քաղաքապետարանը միացել է կլիմայի և էներգիայի վերաբերյալ ԵՄ Զաղաքապետների դաշնագրին: Զաղաքապետների դաշնագրին միանալով՝ Երևանը, իր պարտականությունների շրջանակում և ղեկավարվելով Կայուն Էներգիայի գործողությունների ծրագրով⁽¹⁷⁾ սահմանված սկզբունքներով, պարտավորվել է 2020թ-ին Երևանում ջերմոցային գազի արտանետումները կրճատել առնվազն 20%-ով՝ Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ի 2012թ. բազային ցուցանիշների համեմատ⁽¹⁷⁾:

Էլեկտրաէներգիայի սպառումը արտադրված մեկ լիտր խմիչքի հաշվով, ԱՁ




Աղբյուր. Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ի տվյալներ

Արտադրության մեջ Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ն հիմնականում օգտագործում է հետևյալ ապրանքները և բաղադրիչները՝ օշարակ, պրեֆորմներ, ջուր, շաքար, փաթեթավորման նյութեր և այլն: Վերը նշվածներից Ընկերությունը տեղական շուկայից ներկայումս ձեռք է բերում պրեֆորմներ, ջուր, շաքար և փաթեթավորման նյութերի մի մասը:

2015-2017թթ. ընթացքում Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ն ավելացրել է տեղական մատակարարների գծով ծախսումների մասնաբաժինը ընդհանուր մատակարարների գծով ծախսումների մեջ (ըստ արժեքի), ինչը դրական ազդեցություն է ունեցել Ընկերության՝ ՀԱԱ-ի գծով ազդեցության վրա՝ մուլտիպլիկատորի էֆեկտով:

Տեղական արտադրության շաքարի օգտագործում. 2016թ-ին Ախուրյանի շաքարի գործարանը սերտիֆիկացվեց Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ի կողմից և վերջինս սկսեց կիրառել տեղական արտադրության շաքար արտադրության մեջ: Տեղական արտադրության շաքարի օգտագործումը թույլ է տալիս ավելացնել Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ի կողմից ստեղծված ընդհանուր ՀԱԱ-ն: Տեղական արտադրության շաքար գնելու համար կատարած ծախսումների մասնաբաժինը տեղական գնումների գծով ընդհանուր ծախսումներում կազմել է 0.1%, 5.1% և 8.8% համապատասխանաբար 2015թ-ին, 2016թ-ին և 2017թ-ին:

Տեղական մատակարարների գծով ծախսումների մասնաբաժինը ընդհանուր մատակարարների գծով ծախսումների մեջ (ըստ արժեքի), 2015 – 2017թթ.




Աղբյուր. Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ի տվյալներ, Բեյ-Փի-Էս-Ջի-ի հաշվարկներ

Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ն իր եկամուտը ստանում է Հայաստանում արտադրված և ներմուծված ապրանքների վաճառքից: 2015-2017թթ. Հայաստանում արտադրված ապրանքների վաճառքից ստացված հասույթի մասնաբաժինը ընդհանուր հասույթի մեջ կազմել է 75%:


Մենք իրականացրել ենք նաև Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ի՝ ուղղակի, անուղղակի և ածանցյալ ՀԱԱ-ի գծով ազդեցության վերլուծություն՝ ըստ տնտեսության ճյուղերի, մակրամասները ներկայացված են ստորև բերված գրաֆիկներում: Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ի կողմից տրամադրված ֆինանսական տեղեկատվության համաձայն⁽²⁾՝ 2015-2017թթ. ընթացքում ՀԱԱ-ի աճի հիմնական խթանները եղել են տնտեսության հետևյալ ճյուղերը.



Մուտք և խմիչքներ. հիմնականում արտադրական նպատակով տեղական արտադրության շաքարի ձեռք բերման շնորհիվ



Տրանսպորտ. հիմնականում ներմուծման երկրների տեղակայվածության և ներմուծվող ապրանքատեսակների փոփոխության շնորհիվ



Մեծածախ և մանրածախ առևտուր. հիմնականում տեղական առաքման ծավալների աճի շնորհիվ

Կոկա-Կոլա ՅՔԸԱ-ի՝ ուղղակի և անուղղակի ՅԱԱ-ի գծով ազդեցությունը Հայաստանում՝ ըստ տնտեսության ճյուղերի, 2015-2017թթ., մլն. ՀՀ դրամ



Սնունդ և խմիչքներ



110

2015



437

2016



1,033

2017



Տրանսպորտ



16

2015




390

2016



756

2017



Մեծածախ և անրածախ առևտուր



1,403

2015




1,341

2016



1,863

2017



Ֆինանսական միջնորդություն և բիզնես գործունեություն



602

2015



737

2016



934

2017

- Ուղղակի ՅԱԱ
- Անուղղակի ՅԱԱ, 1-ին կարգի մատակարարների ՅԱԱ
- Անուղղակի ՅԱԱ, մատակարարման առավել լայն շղթայի ՅԱԱ


Ազդեցությունը շրջակա միջավայրի վրա

Հիմնական ուղղությունները


Շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նվազագույնի հասցնելը Կոկա-Կոլա ՅՔԸԱ-ի առաջնային նպատակներից մեկն է: Շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով իրականացվող գործողությունների հիմնական ուղղությունները հետևյալն են⁽⁷⁾:



Նվազեցնել ջրի սպառումը արտադրված մեկ լիտր խմիչքի հաշվով



Նվազեցնել էլեկտրաէներգիայի սպառումը արտադրված մեկ լիտր խմիչքի հաշվով



Նվազեցնել փաթեթավորման քաշը արտադրված մեկ լիտր խմիչքի հաշվով



Նվազեցնել ածխածնի երկօքսիդի արտանետումները արտադրված մեկ լիտր խմիչքի հաշվով



Ընդլայնել թափոնների վերամշակման ծավալները և խստորեն կառավարել վտանգավոր թափոնները



Աշխատողներին ներգրավել շրջակա միջավայրի պահպանության հարցերում

Ջրի օգտագործման արդյունավետություն

Կոկա-Կոլա ՅՔԸԱ-ն առաջնահերթություն է տալիս արտադրության հիմնական բաղադրիչ հանդիսացող ջրային ռեսուրսների պահպանմանը և արդյունավետ օգտագործմանը: 2017թ-ին ջրի սպառումն արտադրանքի մեկ լիտրի հաշվով նվազել է **2.7%-ով** 2015թ-ի համեմատ:


Թեև 2015-2017թթ. ընթացքում Կոկա-Կոլա ՅՔԸԱ-ի ըմպելիքների ընդհանուր արտադրությունն աճել է **15.2%-ով**, 2017թ-ին ջրօգտագործման ընդհանուր ծավալն աճել է ընդամենը **12.1%-ով** 2015թ. համեմատ:

Խնայողությունների շնորհիվ 2017թ-ի ջրի սպառման մակարդակը **5.3%-ով** ցածր էր բյուջեով նախատեսված ցուցանիշից⁽⁸⁾:

Ընկերության նպատակն է 2020թ-ին ապահովել **1.95** լիտր ջրի սպառում արտադրված մեկ լիտր խմիչքի հաշվով, ինչը **8.9%-ով** ցածր է 2017թ. ցուցանիշից⁽⁸⁾:


2017թ-ին Կոկա-Կոլա ՅՔԸԱ-ն միացել է Ջրային ռեսուրսների կառավարման միջազգային դաշինքին: Անդամակցությունը բաց է այն կազմակերպությունների համար, որոնք նպատակ ունեն համատեղ ուժերով լուծել ջրային ռեսուրսների հետ կապված խնդիրները: Անդամակցությունը Ջրային ռեսուրսների կառավարման միջազգային դաշինքին ծառայում է որպես պլատֆորմ՝ գիտելիքների փոխանակման համար և որպես միջոց՝ ջրային ռեսուրսների հետ կապված նպատակների իրագործման համար: Ջրային ռեսուրսների կառավարման միջազգային դաշինքի միջոցով ձեռք բերված գիտելիքներն օգնում են դաշինքի անդամներին կատարելագործել ջրային ռեսուրսների կառավարման իրենց համակարգերը:

Ջրի սպառումը արտադրված մեկ լիտր խմիչքի հաշվով, լիտր



Աղբյուր. Կոկա-Կոլա ՅՔԸԱ-ի տվյալներ

Կոկա-Կոլա ՅԲԲԱ-ի գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա Հայաստանում



Նավթ, քիմիական և ոչ հանքային կյուլներ



251

2015




232

2016



325

2017



Կոմունալ ծառայություններ (էլեկտրաէներգիա, գազ, ջուր, կապ)



211

2015



202

2016



233

2017



Այլ



178

2015



165

2016



199

2017



Կոկա-Կոլա ՅԲԲԱ



4,359

2015



4,449

2016



4,859

2017

Ծանոթագրություն. Կոկա-Կոլա ՅԲԲԱ-ի՝ ուղղակի ՅԱԱ-ի գծով ազդեցությունը ներկայացված է առանձին, սակայն կազմում է սննդի և խմիչքների ոլորտի մաս:

Աղբյուր. Կոկա-Կոլա ՅԲԲԱ-ի տվյալներ, Թեյ-Փի-Էս-Ջի-ի հաշվարկներ


Կոկա-Կոլա ՅՔԲԱ-ի՝ ածանցյալ ՅԱԱ-ի գծով ազդեցությունը Հայաստանում՝ ըստ տնտեսության ճյուղերի, 2015-2017թթ., մլն. դրամ

	Սնունդ և խմիչքներ	17	72	156
	Տրանսպորտ	6	152	295
	Մեծածախ և մանրածախ առևտուր	543	519	721
	Ֆինանսական միջնորդություն և բիզնես գործունեություն	112	138	174
	Նավթ, քիմիական և ոչ հանքային նյութեր	62	58	81
	Կոմունալ ծառայություններ (էլեկտրաէներգիա, գազ, ջուր, կապ)	38	36	42
	Այլ	66	63	75
	Կոկա-Կոլա ՅՔԲԱ	223	242	270
		2015	2016	2017

Ծանոթագրություն. Կոկա-Կոլա ՅՔԲԱ-ի՝ ածանցյալ ՅԱԱ-ի գծով ազդեցությունը ներկայացված է առանձին, սակայն կազմում է սննդի և խմիչքների ոլորտի մաս:

Աղբյուր. Կոկա-Կոլա ՅՔԲԱ-ի տվյալներ, Բեյ-Փի-Էմ-Ջի-ի հաշվարկներ


Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության այլ նախագծեր¹⁰




Ամանորյա տոնական նախաձեռնություններ. Զաղցրավենիք և այլ նվերներ մանկատան երեխաների համար



Աջակցություն Տիկնիկային թատրոնների միջազգային փառատոնին, 2016թ.




2017թ-ին Կոկա-Կոլա ՅՔԲԱ-ն ստորագրել է Փոխըմբռնման հուշագիր «Օրբան» բարեգործական ՀԿ-ի հետ՝ ընդլայնելով երկարաժամկետ համագործակցության շրջանակները: Հուշագրի համաձայն՝ Կոկա-Կոլա ՅՔԲԱ-ի աշխատողները կամավոր կերպով օգնում են «Օրբան»-ի երեխաներին կատարել դպրոցի տնային աշխատանքները: Նրանք նաև մասնակցում են բարեգործական կազմակերպության մշակութային և արտադպրոցական նախաձեռնություններին:




կազմակերպում (2014-2015թթ.): Նախագիծն իրականացվել է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության, «Գլոբալ Շեյփերս» ՀԿ-ի և «ՄԱՐՕԳ» կրեատիվ գործակալության հետ համատեղ՝ Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ: Նախագիծն նպատակն էր բարձրացնել Հայաստանի բնակչության իրազեկվածությունն ակտիվ և առողջ ապրելակերպի մասին՝ պարբերաբար կազմակերպվող սպորտային նախաձեռնություններում և մրցույթներում բնակչությանը ներգրավելու միջոցով⁽¹⁰⁾:



«Կրկին մաքուր դարձնել Հայաստանը», 2017թ.




Կայուն զարգացման փորձի փոխանակում այլ ընկերությունների համար, 2017թ.



Ծառատունկ, 2017թ.

10. Նշված նախաձեռնությունների ազդեցությունը գնահատված չէ:

Երիտասարդության զարգացում



Գործազրկությունը երիտասարդների շրջանում շարունակում է մնալ Հայաստանում առկա առաջնային խնդիրներից մեկը: Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ի սոցիալական ներդրումն այս ոլորտում նպատակ ունի դասընթացների միջոցով զարգացնել կյանքի և բիզնես հմտությունները, որոնք կօգնեն երիտասարդներին դարձնել պրոֆեսիոնալ աշխարհի անցում կատարելիս⁽⁷⁾:

Երիտասարդների զարգացում

Այս խնդրի լուծմանը նպաստելու նպատակով Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ն 2017թ-ին նախաձեռնեց «Երիտասարդների զարգացում» նախագիծը, որի նպատակն է աջակցել 18-30 տարեկան երիտասարդներին նրանց մասնագիտական ձգտումների իրագործման հարցում: Նախագիծը շահառուները խոցելի խմբերի երիտասարդ ներկայացուցիչներ են, հատկապես մարզերից, ինչպես նաև բուհերի շրջանավարտներ են և պոտենցիալ երիտասարդ ձեռներեցներ:

Նախագծի շրջանակներում կազմակերպվել են հարցազրույցների, ինքնակենսագրություն գրելու, ինքնազարգացման և ինքնագնահատման հմտությունների վերաբերյալ դասընթացներ, որոնք վարել են պրոֆեսիոնալ դասընթացավարներ: Ծրագիրն իրականացվում է «Այ Էյ Բի» բիզնեսի միջազգային ակադեմիայի կողմից՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության աջակցությամբ: Դասընթացները կազմակերպվել են Երևանում, Լոռու, Շիրակի, Կոտայքի, Արմավիրի, Արարատի, Արագածոտնի, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերում: Հաշվետվության պատրաստման պահի դրությամբ նախագիծն արդեն մասնակցել էր 2,000 երիտասարդ: Ընկերության նպատակն է ներգրավել 2,100 մասնակից (500՝ Երևանից և 1600՝ մարզերից) մինչ 2018թ. ավարտը և 8,000 մասնակից՝ մինչև 2020թ.: Նախագծի հաջորդ փուլում պլանավորվում է կազմակերպել դասընթացներ բիզնես հմտությունների վերաբերյալ՝ հատկապես երիտասարդ ձեռներեցների համար:

«Երիտասարդների զարգացում» նախագծի ազդեցությունը շահառուների կարիերայի զարգացման վրա գնահատելու համար ԶԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ-ին կազմակերպեց խմբակային քննարկումներ նախագծի շահառուների հետ Երևանում (21 մասնակից) և Վանաձորում (19 մասնակից): Քննարկումները ցույց տվեցին, որ նախագիծը դրական արդյունքներ է ունեցել: Քննարկումների մասնակիցները հիմնականում գոհ էին դասընթացների ընթացքում ձեռք բերած հմտություններով և գիտելիքներով, նրանցից ոմանք նշեցին, որ աշխատանքի են ընդունվել դասընթացներին մասնակցելուց հետո:

Ստորև ներկայացված են շահառուների որոշ նկատառումներ և առաջարկություններ:


Some of the comments and suggestions from the beneficiaries:

- «Դասընթացները գործնական էին և խրախուսող»
- «Լավ կլիներ կրճատել խմբի մասնակիցների թիվը»
- «Լավ կլիներ նվազեցնել դասընթացների ժամերի քանակն օրական կտրվածքով, այդ դեպքում դասընթացներն ավելի արդյունավետ կլինեին»
- «Ուրախ կլինեիք մասնակցել այլ նմանատիպ դասընթացների»
- «Դասընթացավարների հետ շփումը շատ արդյունավետ էր, քանի որ նրանք իրենց փորձն էին փոխանցում մասնակիցներին»
- «Կցանկանալիք ունենալ առավել պատրաստված դասընթացավարներ, որպեսզի հնարավոր լիներ վարել ստանդարտացված դասընթացներ յուրաքանչյուր խմբի համար»

Այս փուլում մենք ձեռնպահ կմնանք մասնակիցների կարիերայի զարգացման վրա դասընթացների փաստացի ազդեցության քանակական գնահատական տալուց, քանի որ դասընթացներն անց են կացվել ընդամենը մի քանի ամիս առաջ:

Աշխատատեղերի ապահովում

Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ի աշխատակազմի կառուցվածքը⁽⁴⁾




361

2017թ. վերջի դրությամբ Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ի աշխատակիցների քանակ, ԼՀՀ

19%

Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ում կին աշխատողների մասնաբաժինը




14%

Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ի վերահաս ղեկավար անձնակազմի մեջ կին աշխատողների մասնաբաժինը




31%

Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ում միջնակարգ կրթություն ունեցող աշխատողների մասնաբաժինը



- 20-29 տարեկան
- 30-44 տարեկան
- 45 և ավել տարեկան

Աշխատավարձ




Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ն առաջարկում է աշխատավարձերի բարձր մակարդակ Հայաստանում⁽⁴⁾:


Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ի կողմից 2017թ-ին առաջարկված միջին ամսական աշխատավարձը **45%-ով** էր Հայաստանում գործող միջին ամսական աշխատավարձից⁽¹⁴⁾: Բացի ֆիքսված աշխատավարձից Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ն վճարում է նաև պարգևավճարներ՝ ելնելով աշխատողների կատարողականից: Եթե մենք ընդհանուր միջին ամսական աշխատավարձի մեջ ներառենք նաև պարգևավճարները, ապա Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ի աշխատողի կողմից ստացվող միջին ամսական աշխատավարձը **1.3 անգամ** բարձր կլինի Հայաստանի միջին ամսական աշխատավարձից:

Առողջություն և անվտանգություն⁽⁷⁾

Կոկա-Կոլա ՅՔԲ-ի առաջնային նպատակն է ապահովել աշխատողների առողջությունն և անվտանգությունը աշխատավայրում: Աշխատավայրի անվտանգությունն ապահովելու նպատակով Ընկերությունը կիրառում է հետևյալ երեք գաղափարների վրա հիմնված մոտեցումը:



Լիարժեք համապատասխանություն առողջությանը և անվտանգությանը վերաբերող տեղական և միջազգային օրենքներին և կանոնակարգերին




Դասընթացների կազմակերպում բոլոր աշխատակիցների համար




Առողջության և անվտանգության ապահովման մշակույթի ամրապնդում Ընկերությունում

Յուրաքանչյուր տարի Կոկա-Կոլա ՅՔԲ-ում «ԷՍ-ՋԻ-ԷՍ Ինսպեքշն Սերվիսիս Լիմիթեդ ԲԸ»-ի կողմից իրականացվում է Աշխատանքի վայրում առողջության և անվտանգության գնահատման միջազգային համակարգի 18001 Աշխատանքի վայրում առողջության և անվտանգության ստանդարտի հետ համապատասխանության ստուգում, որն Ընկերությունը հետևողականորեն անցնում է դրական արդյունքներով:


Կոկա-Կոլա ՅՔԲ-ն շարունակաբար աշխատում է Ընկերության մեքենաների պարկի թարմացման և վարորդների համար երթևեկության անվտանգության կանոնների վերաբերյալ դասընթացների կազմակերպման ուղղությամբ:



2017թ-ին մեկ միլիոն երթևեկած կիլոմետրի հաշվով վթարների դեպքերի քանակը կազմել է 5.5՝ ի համեմատություն 2016թ-ին գրանցված 11.5-ի⁶




2017թ-ին առաջին օգնության դեպքերի քանակը կազմել է 4՝ ի համեմատություն 2016թ-ին գրանցված 11-ի⁶



2015-2017թթ. աշխատողների կամ կապալառուների ծանր վնասվածքներ չեն արձանագրվել

Ստեղծված աշխատատեղեր




Մեր գնահատմամբ 2017 ֆինանսական տարվա իր գործունեության շնորհիվ Կոկա-Կոլա ՅՔԲ-ն ստեղծել է **2,341 ԼՂՅ աշխատատեղ**^(2,4,20), ինչը կազմում է 2017թ. Հայաստանի ընդհանուր աշխատողների թվաքանակի **0.23%-ը**⁽¹⁴⁾: Այս աշխատատեղերը ներառում են.

2,341 աշխատատեղ

6. 2015թ-ին գրանցված վթարների և առաջին օգնության դեպքերի վերաբերյալ տեղեկատվություն չի տրամադրվել:

Ակտիվ ապրելակերպ



Համայնքի բնակչության բարեկեցության ապահովումը Ընկերության կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ռազմավարության առանցքային տարրերից մեկն է: Հայաստանում ակտիվ և առողջ ապրելակերպի խթանման նպատակով Կոկա-Կոլա ՅՔԲ-ն իրականացնում է սպորտային ծրագրեր⁽⁷⁾:

Երևան կիսամարաթոն

Երկու հաջորդական տարիների՝ 2016թ և 2017թ. ընթացքում Ընկերությունը «Վերադարձ Հայաստան» հիմնադրամի և Երևանի քաղաքապետարանի հետ համատեղ կազմակերպել է Կոկա-Կոլա Երևան կիսամարաթոնը, որին կարող էին մասնակցել թե՛ պրոֆեսիոնալ և թե՛ սիրողական սպորտով զբաղվող մարզիկները:

Նախագիծը բաղկացած էր երկու մասից. վազքի հմտությունների զարգացում, որը ներառում էր մի շարք բաց մարզումներ վազորդների համար և վազքի եզրափակիչ մրցույթ: Նախագծի հիմնական նպատակն էր նպաստել երկրում վազքի մշակույթի զարգացմանը: Յուրաքանչյուր տարի Մարաթոնին մասնակցել է շուրջ 1,500-1,700 վազորդ: Մասնակիցների 30%-ը արտերկրից էին և ներկայացնում էին մոտ 40 երկիր:


Երևան կիսամարաթոնների հաղթողները ստացել են դրամական և ոչ դրամական պարգևներ:

Նախագիծն ուներ նաև բարեգործական բաղադրիչ. գրանցումից և հովանավորություններից ստացված գումարի մի մասը նվիրաբերվել է մի շարք բարեգործական ծրագրերի («Դասավանդիր, Հայաստան», «Բարի մամա» հաշմանդամ երեխաների վերականգնողական կենտրոն, Հայաստանի բարեգործական ընդհանուր միություն, «Օրբան» հասարակական կազմակերպություն), բացի այդ, մարաթոնին կարող էին մասնակցել նաև հաշմանդամություն ունեցող վազորդները:

Երևան կիսամարաթոն նախագծում իրենց մասնակցությունն են ունեցել բազմաթիվ կամավորներ, ովքեր օգնել են նախագծի նախապատրաստման և իրականացման գործում:

Վերը նշված տեղեկատվությունը հաստատվել է Երևանի քաղաքապետարանի կողմից⁽²³⁾:

Ջրային ռեսուրսների կառավարում



2016թ-ին Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ն ստորագրել է Փոխըմբռնման հուշագիր ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության հետ⁽²⁵⁾: Այս գործընկերության նպատակն է բարելավել ջրային ռեսուրսների կառավարման համակարգը Հայաստանում և հատկապես նպաստել գյուղատնտեսության և ձկնաբուծության տեսանկյունից կարևոր շրջան հանդիսացող՝ Արարատյան դաշտավայրի ջրային ռեսուրսների պահպանմանը, արդյունավետ օգտագործմանը և կառավարմանը:


Հայանիստ գյուղի (Արարատի մարզ) ոռոգման ցանցի վերականգնում

Վերոնշյալ գործընկերության շրջանակներում իրականացված՝ ջրային ռեսուրսների կառավարմանը վերաբերող նախագծերից մեկը Հայանիստ գյուղի (Արարատի մարզ) ոռոգման ցանցի վերականգնումն էր, որը իրականացվել է Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և Հայաստանում Գլոբալ Էկոլոգիական հիմնադրամի փոքր դրամաշնորհների ծրագրի (ՄԱՉԾ-ի կողմից իրականացվող) համատեղ ուժերով:

Հայանիստը Արարատի և Արմավիրի մարզերի 30 համայնքներից մեկն է, որը չունի խմելու կամ ոռոգման ջրի հասանելի կայուն ռեսուրսներ ստորգետնյա ջրերի պաշարների նվազեցման և ձկնաբուծարանների կողմից արտեզյան ջրերի օգտագործման պատճառով, ինչը վտանգ էր ներկայացնում մարզում երկարաժամկետ տեսանկյունից ստորերկրյա ջրային ռեսուրսների առկայության համար: Հայանիստը Արարատի մարզի Մասիսի շրջանի միջին չափի համայնք է, որի բնակչությունը կազմում է 2,500 մարդ: Այն մոտ է մայրաքաղաքին և ունի գյուղատնտեսական նպատակներին համապատասխանող բերրի հող: Հայանիստում մոտ 160 հեկտար գյուղատնտեսական հողերը չէին ոռոգվում:


Նախագծի նպատակն էր կարգավորել այդ խնդիրը ձկնաբուծարանների ջրի ելքի կետում նոր պոմպակայան կառուցելու և նոր, ավելի արդյունավետ ոռոգման ցանց տեղադրելու միջոցով: Նախագծի վերջնական նպատակն էր ապահովել 40 հա հողատարածքի ոռոգումը Հայանիստ համայնքում:

Համայնքի անդամների կյանքի որակի և բարեկեցության վրա Հայանիստում իրականացված նախագծի ազդեցությունը գնահատելու համար Զեյ-Փի-Էմ-Ջի-ին կազմակերպեց խմբակային քննարկում նախագծի շահառուների հետ: Քննարկումն անցկացվեց Հայանիստում՝ 6 շահառուների հետ: Քննարկման արդյունքները ցույց տվեցին, որ ոռոգման համակարգը կառուցվել է և, որ Հայանիստ համայնքի բնակիչներն այլևս չունեն նշված 40 հա հողատարածքի ոռոգման համար ջրի պակաս: Այնուամենայնիվ, համայնքում առկա մի շարք խնդիրների պատճառով (օրինակ՝ գյուղատնտեսական տեխնիկայի բացակայություն), 2018թ. դրությամբ ոռոգման համակարգը դեռևս ավբողջությամբ չի շահագործվում: Ներկայումս ոռոգվում է մոտավորապես 5 հա հողատարածք:



- Ուղղակի ԼԴՀ աշխատատեղ
- Անուղղակի ԼԴՀ աշխատատեղ՝ ստեղծված Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ի մատակարարման ցանցում. 1-ին կարգի մատակարարման շղթայի միջոցով և առավել լայն մատակարարման ցանցի միջոցով
- Ածանցյալ ԼԴՀ աշխատատեղ՝ ստեղծվել ուղղակի և անուղղակի աշխատողների կողմից Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ի հետ կապված գործունեության իրենց աշխատավարձը Հայաստանում ծախսելու արդյունքում
- Ստեղծված 1-ին կարգի մատակարարման շղթայի միջոցով
- Ստեղծված առավել լայն մատակարարման ցանցի միջոցով


Աղբյուր. Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ի տվյալներ, ԳԳՎԿ, Զեյ-Փի-Էմ-Ջի-ի հաշվարկներ



2017թ-ին Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ի կողմից ստեղծված **յուրաքանչյուր ուղղակի աշխատատեղի** շնորհիվ Հայաստանում ստեղծվել է լրացուցիչ **5.5 աշխատատեղ** (անուղղակի և ածանցյալ)⁽²⁶⁾:


2015-2017թթ. արդյունքները ներկայացված են ստորև բերվող գրաֆիկում:

2015-2016թթ. Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ի կողմից ստեղծված աշխատատեղեր Հայաստանում, ԼԴՀ



1,136

Ընդամենը ստեղծված աշխատատեղեր



1,527

Ընդամենը ստեղծված աշխատատեղեր


- Ուղղակի աշխատատեղեր
- Անուղղակի աշխատատեղեր
- Ածանցյալ աշխատատեղեր

Աղբյուր. Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ի տվյալներ, Զեյ-Փի-Էմ-Ջի-ի հաշվարկներ


Մենք վերլուծել ենք նաև Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ի կողմից ստեղծված աշխատատեղերն ըստ տնտեսության ճյուղերի, մանրամասները ներկայացված են ստորև բերված գրաֆիկում: Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ի կողմից տրամադրված ֆինանսական տեղեկատվության համաձայն⁽²⁷⁾ 2015-2017թթ ընթացքում ստեղծված աշխատատեղերի թվաքանակի աճի հիմնական խթանները եղել են տնտեսության հետևյալ ճյուղերը.



Մսունդ և խմիչքներ. հիմնականում արտադրական նպատակով տեղական արտադրության շաքարի ձեռք բերման շնորհիվ



Տրանսպորտ. հիմնականում ներմուծման երկրների տեղակայվածության և ներմուծվող ապրանքատեսակների փոփոխության շնորհիվ



Մեծածախ և մանրածախ առևտուր. հիմնականում տեղական առաքման ծավալների աճի շնորհիվ

Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ի կողմից ստեղծված ուղղակի և անուղղակի աշխատատեղերը Չայաստանում՝ ըստ տնտեսության ճյուղերի, 2015-2017թթ., ԼԴՅ



Սնունդ և խմիչքներ



88

2015



380

2016



831

2017



Տրանսպորտ



3

2015




84

2016



164

2017



Մեծածախ և անընթաց առևտուր



303

2015




289

2016



400

2017



Ֆինանսական միջնորդություն և բիզնես գործունեություն



24

2015



30

2016




37

2017

- Ուղղակի աշխատատեղեր
- Անուղղակի աշխատատեղեր՝ 1-ին կարգի մատակարարման շղթայի միջոցով
- Անուղղակի աշխատատեղեր՝ առավել լայն մատակարարման շղթայի միջոցով

Ստորև ներկայացված են Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ի նվաճումները սննդի որակի և անվտանգության ապահովման ոլորտում 2015-2017թթ. ընթացքում⁽⁷⁾։



2016թ-ի առաջին եռամսյակի արդյունքներով Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ն բոլոր Կոկա-Կոլա ՉԲԶ գործարանների շարքում առաջատար դիրք է զբաղեցրել Ապրանքի որակի ինդեքսով




2016թ-ին ներդրվել է սպառողների բողոքների կառավարման նոր ծրագիր




2016թ-ին Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ի գործարանն անցել է միջազգային Սննդի անվտանգության համակարգի սերտիֆիկացման FSSC 22000 ստանդարտի հետ համապատասխանության արտաքին աուդիտ՝ դրական արդյունքներով

Համայնքային ներդրումներ


2015-2017թթ. ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությունը կատարել է 93 միլիոն ՀՀ դրամ գումարի չափով բարեգործական նվիրատվություններ՝ սոցիալական զարգացման ուղղված հետևյալ հիմնական ոլորտներում⁽²⁾։



Ջրային ռեսուրսների կառավարում



Համայնքի բարեկեցություն



Երիտասարդության զարգացում

2015-2017թթ. կատարված նվիրատվությունները կազմել են այդ ժամանակաշրջանի ընթացքում Ընկերության չհարկված շահույթի 1.7%-ը^(1,2)։

2020թ-ին Ընկերությունը նպատակ ունի.⁽⁷⁾


2%

Համայնքային ներդրումների ծավալն աճեցնել մինչև չհարկված շահույթի 2%-ը

10%

Ապահովել Ընկերության աշխատողների 10%-ի կողմից կամավորական աշխատանքների իրականացում աշխատանքային ժամերի ընթացքում

Սննդի որակը և անվտանգությունը⁽⁷⁾




Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ն ապահովում է իր գործունեության համապատասխանությունը ոչ ալկոհոլային խմիչքների արտադրության միջազգային ստանդարտներին, կիրառում է Նոր տեխնոլոգիաներ, իրականացնում է արտադրական գործընթացների կանոնավոր և հաստատուն վերահսկողություն և շարունակաբար հարստացնում է իր արտադրանքի տեսականիս:

Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ն իր արտադրամասում ներդրել է Սննդամթերքի որակի և անվտանգության ստանդարտների համապատասխանությունն ապահովող ծրագրեր, ներառյալ.

- Բարձրակարգ արտադրական պրակտիկա և արտադրության յուրաքանչյուր ցիկլի որակի վերահսկողություն,
- Համապատասխանություն ISO9000 Որակի կառավարում ստանդարտին,
- Վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի (ՎՎՀԿԿ) համակարգի ներդրում,
- Համապատասխանություն տեղական օրենքներին և կանոնակարգերին,
- Համապատասխանություն միջազգային FSSC 22000 Սննդի անվտանգության համակարգի սերտիֆիկացման ստանդարտի հետ,
- Համապատասխանություն Ընկերության ներքին ստանդարտներին:


Արտադրության կայուն և հուսալի որակի ապահովումն Ընկերության առաջնահերթ խնդիրն է: Ընկերությունը հետևում է իր արտադրանքի որակին և կառավարում է այն սպառողների բողոքների և արտադրանքի թարմության վերահսկողության միջոցով:

Արտադրանքի որակին վերաբերող բողոքների քանակը՝



Թարմության ինդեքս⁸:

Գազավորված ըմպելիքներ. Թարմության ժամկետը գերազանցող ապրանքների տոկոսը՝




Հյութեր/Նեկտարներ⁹. Թարմության ժամկետը գերազանցող հյութերի/նեկտարների տոկոսը՝




8. Ապրանքի թարմության ինդեքսը հաշվարկվում է առևտրի կետում ցուցատախտակի վրա ապրանքի պահման թույլատրելի ժամկետի կետից ավելին ցուցատախտակի վրա մնացած ապրանքների տոկոսային արտահայտմամբ (օրինակ՝ Coca Cola 0.5 ՊԷՏ ապրանքանիշի ցուցատախտակի վրա պահպանման թույլատրելի ժամկետը 4 ամիս է, ինչը նշանակում է, որ առևտրի կետում ցուցատախտակի վրա 2 ամսից ավել պահվող ապրանքը համարվում է պակաս թարմ):


9. 2015թ-ին հյութերի թարմության ինդեքս չի հաշվարկվել:




Նավթ, քիմիական և ոչ հանքային նյութեր



Կոմունալ ծառայություններ (Էլեկտրաէներգիա, գազ, ջուր, կապ)



Այլ



Կոկա-Կոլա ՉԲԶԱ



Ծանոթագրություն. Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ի՝ ածանցյալ ՀԱԱ-ի գծով ազդեցությունը ներկայացված է առանձին, սակայն կազմում է սննդի և խմիչքների ոլորտի մաս:

Աղբյուր. Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ի տվյալներ, Բեյ-Փի-Էմ-Ջի-ի հաշվարկներ

Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ի կողմից ստեղծված ածանցյալ աշխատատեղերը Հայաստանում՝ ըստ տնտեսության ճյուղերի, 2015-2017թթ., ԼՂՀ




Ծանոթագրություն. Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ի՝ ածանցյալ ՉԱԱ-ի գծով ազդեցությունը ներկայացված է առանձին, սակայն կազմում է սննդի և խմիչքների ոլորտի մաս:

Աղբյուր. Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ի տվյալներ, Զեյ-Փի-Էմ-Ջի-ի հաշվարկներ

Ներդրում համայնքի սոցիալական զարգացման և բարեկեցության ապահովման գործում


Ընդհանուր առմամբ, կան հիմքեր ենթադրելու, որ կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունն առավել հաճախ է սկսել դիտարկվել ընկերությունների կողմից որպես համայնքներում ներդրումներ կատարելու միջոց, որն էլ հնարավոր է դարձնում նրանց գործունեության հաջողությունը⁽²¹⁾: Այս ներդրումները կարող են կատարվել դրամական հատկացումների, ոչ դրամական նվիրատվությունների, աշխատողների կողմից կամավորական աջակցության և/կամ աշխատողների կողմից նախաձեռնված միջոցառումների ձևով:



Նման ներդրումների համար հստակ սահմանված մոտեցում չկա, այն պայմանավորված է տարբեր գործունեությամբ, այդ թվում՝ բիզնեսի ծավալներով, տնտեսության ճյուղով և տեղակայվածությամբ⁽²²⁾:

Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ն նշում է, որ Հայաստանում իր գործունեությունը սկսելուց ի վեր իր առջև դրել է կայուն զարգացման նպատակներ և հանձն է առել համապատասխան պարտավորություններ: Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը նշանակալից դերակատարում ունի Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ի բիզնես ծրագրերում: Ընկերությունը ձգտում է ավելի լավ ապագա ապահովել մարդկանց և համայնքների համար, որոնց այն ծառայում է⁽⁷⁾:

Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ի կայուն զարգացման մոտեցումը հիմնված է հետևյալ չորս ռազմավարական նպատակների վրա.



Մենք վերլուծել ենք կայուն զարգացման մոտեցման նպատակների իրագործմանն ուղղված Կոկա-Կոլա ՉԲԶԱ-ի կողմից իրականացվող հիմնական գործունեությունը: Ստորև ներկայացված է այդ գործունեության մանրամասն նկարագիրը և ազդեցության գնահատման արդյունքները: Մենք չենք ներկայացրել արդյունքները կամ ազդեցությունը թվային արտահայտմամբ, այլ իրականացրել ենք միայն ընդհանուր որակական ուսումնասիրություն:


Կոկա-Կոլա ՅԲԲԸ-ի ազդեցությունը համայնքի սոցիալական զարգացման և բարեկեցության ապահովման վրա

Ֆիսկալ ազդեցություն

Վճարումներ պետական բյուջե

Լինելով Հայաստանում գործող խոշոր արտադրող, ներմուծող և գործատու՝ Կոկա-Կոլա ՅԲԲԸ-ն Հայաստանի պետական բյուջե նշանակալի ծավալով մուտք կատարող ընկերություններից մեկն է: Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության կողմից հրապարակված Հայաստանի 1000 խոշոր հարկատուների մասին հաշվետվության համաձայն⁽¹³⁾ 2015-2017թթ. ընթացքում Կոկա-Կոլա ՅԲԲԸ-ն դասվել է Հայաստանի **առաջին 50 հարկատուների** շարքին:

Կոկա-Կոլա ՅԲԲԸ-ի կողմից իրականացվող մուտքերը պետական բյուջե կազմված են ընկերության կողմից վճարվող հարկերով, այդ թվում շահութահարկ, աշխատողների, բիզնես գործընկերների կողմից վճարվող հարկեր և ԱԱՀ:




15.6

միլիարդ ՀՀ դրամ

Ընդամենը ֆիսկալ
ազդեցություն

2015-2017թթ. Կոկա-Կոլա ՅԲԲԸ-ի գործունեության շնորհիվ պետական բյուջե կատարված վճարումների ծավալը կազմել է **15.6 միլիարդ ՀՀ դրամ**^(3,13,20), որը կազմել է նույն ժամանակաշրջանում ՀՀ հարկային եկամուտների **0.47%-ը**:



15.6 միլիարդ ՀՀ դրամի մեջ

11.3

միլիարդ ՀՀ դրամ

Ուղղակի ֆիսկալ ազդեցություն^(3,13)

2.3

միլիարդ ՀՀ դրամ


Ֆիսկալ ազդեցություն մատակարարման ցանցի և ածանցյալ տնտեսական գործունեության միջոցով^(3,13,20)

2.0

միլիարդ ՀՀ դրամ

Ֆիսկալ ազդեցություն ուղղակի, անուղղակի և ածանցյալ աշխատողների աշխատավարձի՝ եկամտային հարկով հարկման շնորհիվ^(3,13,20)

Տարեկան ֆիսկալ ազդեցության մանրամասն կառուցվածքը 2015-2017թթ. համար, հազ. ՀՀ դրամ




- Ուղղակի ֆիսկալ ազդեցություն
- Ֆիսկալ ներդրում մատակարարման ցանցի և ածանցյալ տնտեսական գործունեության միջոցով
- Աշխատողների ֆիսկալ ազդեցություն

Աղբյուր. Կոկա-Կոլա ՀԲԶԱ-ի տվյալներ, ՀՀԿԿ, Քեյ-Փի-Էմ-Ջի-ի հաշվարկներ

Ներդրումներ


Կոկա-Կոլա ՀԲԶԱ-ի ներդրումների մակարդակը չափվում է Ընկերության կողմից 2015-2017 ֆինանսական տարիների ընթացքում կատարած կապիտալ ծախսումների միջոցով:

Կապիտալ ծախսումներն իրենցից ներկայացնում են ենթակառուցվածքների ձեռք բերման կամ արդիականացման համար կատարվող ծախսումներ: Ներդրումային գործունեությունը տնտեսական ազդեցության չափման կարևոր գործոններից է, քանի որ համարվում է տնտեսական աճի նշանակալի խթան:




2015-2017 ֆինանսական տարիներին Կոկա-Կոլա ՀԲԶԱ-ն կատարել է **2.7 միլիոն ՀՀ դրամի** չափով կապիտալ ծախսումներ⁽²⁾: 2015-2016թթ.⁷ ընթացքում Կոկա-Կոլա ՀԲԶԱ-ի ներդրումները կազմել են Հայաստանում կատարված ընդհանուր կապիտալ **ներդրումների 0.1 տոկոսը**⁽¹⁴⁾:

Կոկա-Կոլա ՀԲԶԱ-ի կապիտալ ծախսումներ, 2015-2017թթ., հազ. դրամ



Աղբյուր. Կոկա-Կոլա ՀԲԶԱ-ի տվյալներ

Կոկա-Կոլա ՀԲԶԱ-ի 2015թ-ի և 2016թ-ի⁷ կապիտալ ծախսումների ինտենսիվությունը գերազանցում էր Հայաստանի մասշտաբով տնտեսության մեջ իրականացված կապիտալ ծախսումների միջին ինտենսիվության ցուցանիշը⁽¹⁴⁾ համապատասխանաբար 3.9 և 2.1 տոկոսային կետով:



7. Հաշվետվության պատրաստման ամսաթվի դրությամբ 2017թ-ին վերաբերող տվյալները հասանելի չէին: